ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/295/2024

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 20 սեպտեմբերի 2024թ.

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի սեպտեմբերի 20-ին, քննելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի նախկին խորհրդական Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/295/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, Էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով պարզել է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի նախկին խորհրդական Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանի 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և

ծախսերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել Հայտարարագիրը:

1.3 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/1255/356-2024 գրությամբ Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 16:45-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Նշված ծանուցումը Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանի կողմից ստացվել է 2024 թվականի մայիսի 2-ին (հիմք՝ AL0122412109AM հետադարձ հանձնման ծանուցագիր): Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.4 2024 թվականի հունիսի 4-ին պատշաճ ծանուցված Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/260/24 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 01/2893-2024 գրությամբ Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանին է ուղարկվել 2024 թվականի սեպտեմբերի 20-ին, ժամը՝ 11:00-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր, որը վերջինիս կողմից ստացվել է 2024 թվականի սեպտեմբերի 16-ին (հիմք՝ AL0124380392AM հետադարձ հանձնման ծանուցագիր):

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանի բացակայությամբ 2024 թվականի սեպտեմբերի 20-ին, ժամը՝ 11:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն: Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանի կողմից Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին է ներկայացվել էկրանի պատկեր (սքրինշոթ):

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Կարեն Մելիքսեթյանը 2024 թվականի սեպտեմբերի 20-ին Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել դեռևս 2022

թվականի փետրվարի 23-ին Հանձնաժողով ներկայացրած անձնական տվյալները բեռնելու անհնարինության մասին գրություն (էկրանի պատկեր), որով հայտնել է հետևյալը.

«22.02.2022թ.-ին ստացել եմ ծանուցում հայտարարագիր ներկայացնելու անհրաժեշտության մասին: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2020 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 208-Ա/1 հրամանով Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանս 2020 թվականի սեպտեմբերի 8-ից նշանակվել եմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական: Նախարարի 11.03.2021 թվականի թիվ 33-Ա/1 հրամանով ազատվել եմ զբաղեցրած պաշտոնից, որի արդյունքում ներկայացրել եմ «պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու» հայտարարագիր: Նախարարի 02.08.2022 թվականի թիվ 127-Ա/1 հրամանով անվավեր է ճանաչվել Նախարարի 11.03.2021 թվականի հրամանը: Նախարարի 02.12.2021 թվականի հրամանով դեկտեմբերի 9-ից ազատվել եմ զբաղեցրած պաշտոնից: 22.02.2022թ.-ին ստացած ծանուցմամբ չի նշվում, թե կոնկրետ որ հայտարարագիրն է պահանջվում ներկայացնել, ինչի պատճառով փորձեցի լրացնել և «պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու» և «տարեկան» հայտարարագրերը: «Պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու» հայտարարագրում համակարգը թույլ չի տալիս լրացնել պաշտոնից ազատվելու ամսաթիվը, իսկ «տարեկան» հայտարարագրում համակարգը թույլ չի տալիս անձնական տվյալներից բեռնել ընտանիքի անդամների տվյալները: Խնդիրը կարգավորելու նպատակով չեմ կարողանում նաև [redacted] հեռախոսահամարով կապ հաստատել: Խնդրում եմ կապնվել ինձ ([redacted] հեռախոսահամարով կամ հայտնել պատասխանատու աշխատակցի հեռախոսահամարը»:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/295/2024 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի նախկին խորհրդական Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի դեկտեմբերի 9-ի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի նախկին խորհրդական Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

4.3 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված ***հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը*** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.10 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

4.11 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վերոնշյալի համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ վարույթի մասնակցի կողմից ներկայացված գրությանն այսպես.

Վարույթի մասնակիցը գրությամբ հիշատակել է Հանձնաժողովի կողմից 22.02.2022 թվականին իրեն ուղարկված ծանուցագիր հայտարարագիր ներկայացնելու պարտավորության վերաբերյալ, որը գրության հետ մեկտեղ՝ **որպես ապացույց, չի ներկայացվել Հանձնաժողով:** Միևնույն ժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված գրության վերաբերյալ տվյալներ Հանձնաժողովում նույնպես առկա չեն:

Մինչդեռ, սույն վարույթով քննարկվող իրավախախտման վերաբերյալ առաջին ծանուցումը Հանձնաժողովի կողմից Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանին է ներկայացվել 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/1255/356-2024 գրությամբ՝ առաջարկելով նշված գրությունը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը, ինչպես նաև հայտնվել է այն մասին, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 16:45-ին վերջինս հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Նշված գրությամբ վարույթի մասնակցին է տրամադրվել նաև այն հղումը, որով անցնելիս վերջինս կարող էր ներկայացնել Հայտարարագիրը:

Հարկ է նշել, որ նշված գրությունը ստանալուց հետո վարույթի մասնակցի կողմից չի ներկայացվել Հայտարարագիրը: Ավելին, վարույթի մասնակցի կողմից Հանձնաժողով չի ներկայացվել որևէ գրություն Հայտարարագիր լրացնելու հետ կապված խնդիրների վերաբերյալ, եթե այդպիսիք առկա են եղել: Սույն վարույթի շրջանակներում վարույթի մասնակցի կողմից չի ներկայացվել որևէ լրացուցիչ դիրքորոշում:

Սույն վարույթի առարկան հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի N 205-Ա/1 հրամանի հիման վրա Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը չներկայացնելու զանցանքը: Նշված հրամանը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարության կողմից ռեեստրի հետ մեկտեղ **Հանձնաժողով է մուտքագրվել 2022 թվականի հունիսի 17-ին** 01/16/14422-2022 գրությամբ, ինչը նշանակում է, որ Հանձնաժողովը օբյեկտիվորեն չէր էլ կարող վարույթի մասնակցի կողմից հիշատակված 22.02.2022 թվականի ամսաթվով սույն վարույթի առարկա հանդիսացող Հայտարարագրի վերաբերյալ որևէ ծանուցում ներկայացնել վարույթի մասնակցին, ուստի Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված գրությամբ ներկայացված տեղեկատվությունը վերաբերելի չէ սույն վարույթի առարկային:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,

24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Հրաչյայի Մելիքսեթյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ